

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ**

**§ 1. ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐ: ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ՀԵՏ**

1. Բնական թվեր: Բնական թվերի տասնորդական գրառումը



Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի՞ ամբողջ թիվ կա.
ա) սկսած 20-ից մինչև 50-ը,
բ) սկսած k բնական թվից մինչև m բնական թիվը ($k < m$):
2. Ընդամենը քանի՞ երկնիշ թիվ կա:
3. Ընդամենը քանի՞ եռանիշ թիվ կա:
4. Ընդամենը քանի՞ քառանիշ թիվ կա:
5. Ընդամենը քանի՞ վեցանիշ թիվ կա:
- 6.* 7208395 թվի գրառման մեջ ջնջեք չորս թվանշան այնպես, որ ստացված եռանիշ թիվը լինի. ա) ամենամեծը, բ) ամենափոքրը:
- 7.* 3728954106 թվի գրառման մեջ ջնջեք երեք թվանշան այնպես, որ մնացած թվանշանները, նույն հերթականությամբ, կազմեն հնարավորինս փոքր յոթանիշ թիվ: Ո՞րն է այդ յոթանիշ թիվը:
8. Գրառեք բոլոր այն եռանիշ թվերը, որոնց գրառման մեջ միաժամանակ մասնակցում են 1, 3 և 5 թվանշանները:
9. Գրառեք բոլոր այն եռանիշ թվերը, որոնց գրառման մեջ 1-ից և 9-ից տարբեր այլ թվանշան չպետք է լինի:
10. Գրառեք բոլոր այն երկնիշ թվերը, որոնց գրառման մեջ կարող են մասնակցել միայն 2, 4 կամ 7 թվանշանները (թվի գրառման մեջ թվանշանը կարող է կրկնվել):

- 11.** Ընդամենը քանի՞ երկնիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի գրառման մեջ կա 4 թվանշանը:
- 12.** Ընդամենը քանի՞ երկնիշ թիվ կա, որոնց գրառման մեջ չկա 5 թվանշանը:
- 13*.** Ընդամենը քանի՞ եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի գրառման մեջ չկա 0 թվանշանը:
- 14.** Ընդամենը քանի՞ եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրում կա 5 թվանշանը:

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

- 1.** p) $m - k + 1$: **3.** 900: **5.** 900 000: **7.** 3 254 106: **11.** 18: **12.** 72: **13.** 729: **14.** 171: